



Ե. ՏԱՐԻ, ԹԻՎ 5, Ապրիլ 2022

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՊԱՏԳԱՄԸ



«Միայն հաւատա՛մ»

Մեր Տէրն ու Փրկիչը Յիսուս Քրիստոս իր սրբազան տնօրինական առաքելութեան ընթացքին, իր կենդանի խօսքով քարոզեց ու Աստուծոյ կամքը յայտնեց մարդկութեան: Ան վերահաստատեց Աստուծոյ սէրը դէպի իր ստեղծած արարածները: Ան դարձաւ երկնաւոր Հօր անհուն սիրոյ արտայատիչն ու մեկնաբանը: Ան հաշմանդամներուն քալելու կարողութիւն տուաւ, կոյրերուն աչքերը բացաւ, հիւանդներուն առողջացուց և մեռելներուն յարութիւն տուաւ, վերստին կեանք պարգևեց, թողութիւն տալով բոլորին:

Ահա թէ ինչն ու դժուար առաքելութիւն մըն էր մարդուն վերականգնումը, մարդուն վերանորոգումը, մէկ խօսքով մարդուն փրկութիւնը:

Մարդեղացեալ Աստուծոյ կեանքը տառապանքով լեցուեցաւ ու խաչի ճամբով ընթացաւ: Խաչի ճանապարհը ուրիշ բան չէր, եթէ ոչ խաւարէն դէպի լոյս, մահէն դէպի կեանք առաջնորդող միակ ճանապարհը: Այդ ճամբով է, որ մահը խորտակուեցաւ, դժոխքը քանդուեցաւ ու մահուան երկիւղը փարատեցաւ: Մարդը ազատագրուեցաւ հոգիի գերութենէն, սատանային ծառայութենէն, մէկ խօսքով՝ մարդը անդրադարձաւ ու հասկցաւ, որ գեղեցիկն ու բարին, ազնիւն ու արին, պիտի ապրին յաիտենապէս: Մահուան երկիւղով ապրող մարդուն դիմաց բացուեցաւ կեանքի անմահութեան ճանապարհը:

Պօղոս առաքեալ փիլիպպեցիներուն ուղած իր նամակին

մէջ կը նշէ, որ իր միակ փափաքն է՝ ճանչնալ զՔրիստոս և մասնակցիլ անոր չարչարանքներուն, որ այլ բանիւ, կը նշանակէ «հին, մեղաւոր մարդը» թաղել և յոյս ունենալ Յիսուսի հետ յարութիւն առնելու, այսինքն՝ դառնալու նոր մարդ՝ մաքրուած և սրբուած բոլոր աղտեղութիւններէն և չարութիւններէն, մէկ խօսքով՝ բոլոր տեսակի մեղքերէն:

Այսօր, որքանով պատրաստ ենք իսկապէս ճանչնալու մեր Տէրը Յիսուս Քրիստոս:

Այսօր, որքանով պատրաստ ենք օրէնքէն անդին՝ հաւատքով և ամբողջական վստահութեամբ մօտենալու Քրիստոսի, մասնակից դառնալու Անոր չարչարանքներուն, այսինքն՝ թաղելու անցեալը, հին մեղաւոր բնութիւնը, դառնալու նոր մարդ, նոր արարած, պատրաստ մեր կեանքը տալու, մեր կեանքը ընծայաբերելու յանուն Քրիստոսի և արժանանալու յարութեան:

Այսօր, Քրիստոսի յարութիւնը մեզի կը սորվեցնէ, որ մենք ձգտումը ունենանք և փորձենք հասնիլ սրբութեան և կատարելութեան: Չնայինք անցեալին, այլ նայինք գալիքին, կատարեալին: Չնայինք մեր սխալներուն և մեղքերուն, այլ նայինք վաղուան, վազենք առաջ՝ Քրիստոսի նմանելու: Որովհետև, քրիստոնէայ անհատի կեանքը մրցավազք մըն է և մենք պէտք է վազենք՝ շահելու մրցանակը: Այդ մրցանակով կը շահինք Քրիստոսի ժառանգակից դառնալու պատիւը և Անոր փառքին մասնակից դառնալու ուրախութիւնը, ճանչնալու Զինք, հաւատալու և վստահելու Իրեն:

Այս բոլորը ընելու համար միակ ճանապարհը՝ «Հին, մեղաւոր մարդը» պէտք է թաղենք ու գերեզմանենք, դառնալու նոր մարդ՝ սրբացած ու մաքրուած ամէն տեսակ մեղքերէ:

Քրիստոս Իր յարութեամբ նուաճեց մահը և մեզի կեանք պարգևեց, նոր կեանք՝ աստուածային անմահական զօրութեամբ լեցուն:

Քրիստոսի յարութիւնը նոր սկիզբ դրաւ մարդու կեանքին մէջ: Յարութեամբ մարդը նոր արարած դարձաւ: Այլ խօսքով՝ Քրիստոսի յարութեամբ մահը ընկճուեցաւ, մեղքը տապալուեցաւ:

Քրիստոս Իր չարչարանքի և խաչելութեան դէպքերու նախօրեակին յայտարարեց Իր աշակերտներուն՝ «Ես յաղթեցի աշխարհին», այն աշխարհին, որ Աստուծմէ հեռացած մարդուն կողմէ շինուած էր, որուն կը պատկանէր մեղքով լեցուն մարդը:

Սուրբ Յարութեամբ մահն ու մահուան սարսափը յաղթուած է այլևս...

«Միայն հաւատա՛մ», կը պատգամէ Քրիստոս. այս է իմաստը յարութեան...

ԽԱԶԻ ՃԱՆԱՊԱՐՀԷՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ



Ս. Յարութիւնը, քրիստոնէութեան և քրիստոնէական եկեղեցոյ հիմնաքարը եղող մեծագոյն տօնն է: Այսօր, Քրիստոսի Յարութեամբ՝ մահը կեանքով յաղթելու պատասխանը կը տրուի մարդկութեան միտքը դարեր շարունակ չարչրկած մեծագոյն մտատանջութեան և անլոյծ հարցումին:

Յարուցեալ Քրիստոսով աշխարհը կ'ազատագրուի Չարի և չարին պատճառած մեղքի ապականիչ խայթոցէն և մահուան երկիւղէն:

Գտն Աստուծոյ աշխարհ գալուստով սկիզբ կ'առնէ Նոր Կեանքի փրկագործ առաքելութիւնը:

Քրիստոսի Հրաշափառ Յարութեամբ մեր երկրաւոր կեանքին կը տրուի նոր իմաստ, ուղղութիւն և նպատակ:

Աննպատակ չենք քալեր ու ապրիր այլևս: Մեր հետ Քրիստոս կը քալէ, կը պայքարի և մեզ կ'առաջնորդէ կեանքի աղբիւր՝ դէպի Աստուած:

Երկրաւոր մեր կեանքը այլևս չենք ապրիր մահուան համար, այլ՝ Քրիստոսի:

Այս իսկ պատճառով, Քրիստոսի Հրաշափառ Յարութեան տօնը ցնծութեան և յաղթանակի օր է իւրաքանչիւր հաւատացեալի համար, որ տօնին նախորդող ամբողջ շաբթուան ընթացքին, իր Փրկչին հետևելով կրնայ երթալ Գեթսեմանիի պարտէզը աղօթելու, համաձայն կ'ըլլայ անարգուիլ ու ձաղկուիլ Քահանայապետին ու Պիղատոսի պալատին մէջ:

Յարութեան տօնը յաղթանակի տօն է այն քրիստոնէային համար մանաւանդ, որ գիտէ համբերատարութեամբ անցնիլ խաչի ճանապարհէն և բարձրանալ մինչև Գողգոթա լեռ, սակայն՝ առանց ընկճուելու:

Խաչի ճանապարհի համբերատարութիւնը շատ մը քրիստոնէաներու համար անվերջանալի կը թուի ըլլալ, սակայն Փրկչին՝ Քրիստոսի օրինակը, տառապանքէ ետք հանգստութիւն կը ցուցնէ, խաւարէն ետք լոյս կը ծագեցնէ, մահէն ետք Յարութեան յաղթանակը կը շեփորէ:

Ահաւասիկ Յարութեան Տօնին խրախուսիչ ու ցնծալից իմաստը:

Այս իմաստով, աղօթասաց վարդապետին բառերը ատելի ևս կ'արժևորուին, հաւատացեալին կեանքին մէջ, մահուան վրայ տարուելիք Յարութեան յաղթանակին յոյսի աւիշը ներարկելով՝ «Իր մահովը մահը սպաննեց և Իր յարութեամբ մեզի կեանք պարգևեց»:

ՃԱՆԱՊԱՐՀ ԽԱԶԻ

Ո՛վ մատնուած Յիսուս,
Դուն որ փրշապատ գրլուխ մ'ունեցար՝
Գըթա՛ իմ գրլխուս.
Դերաներըդ զայն քարկոծեցին յար
Եկեղեցիին սալաքարերով:
Վերքերէս բըղխող ըղեղըս կերան
Իշամեղուններն ամբարըշտութեան:
Տէ՛ս, մազերուս վրայ եղեամն է՝ նըստեր.
Ես շատ եմ տանջուեր:

Տառապան Յիսուս,
Դուն որ ունեցար արտաստող աչքեր՝
Գըթա՛ աչքերուս.
Անոնք ատելի արտօսը են քամեր
Քան թէ խըմեր լոյս: Դագաղներու վրայ
Միշտ մահն են հըսկեր մոմերու հետ շէջ:
Բիբերս են ինկեր վիշտի հորի՛ն մէջ:
Տէ՛ս, կոպերուս վրայ աճիւն է ցանուեր.
Ես շատ եմ տըքներ:


Ապտակուած Յիսուս,
Դուն որ ունեցար ձեռքեր կալ ու կապ...
Գըթա՛ ձեռքերուս.
Ափերս են տաղեր պայտերով հրատապ,
Եւ մատուրներէս, ըստիւնքներու նման,
Արիւնս են կըթեր: Դաստերս ճաթած են
Կըրելէն երկաթ, հողը փորելէն:
Տէ՛ս, եղունգներըս սիրտս են յօշուեր.
Ես շատ եմ խոցուեր:

Թըքնընում Յիսուս,
Դուն որ ունեցար ձաղկընում կողեր՝
Գըթա՛ կողերուս.
Անոնք աղբիւսի վըրայ են պատկեր՝
Եւ վիշտը քունէն ճանչցեր յաղթական.
Բուծաներ են միշտ գըրկած Մահը կոյր՝
Իրենց քաղցն անոր տալով կերակուր:
Տէ՛ս, փողոցի շուն մ'է՛ կողըս պատուեր
Շանտ եմ հալածուեր:

Մահապարտ Յիսուս,
Դուն որ բևեռում ոտքեր ունեցար՝
Գըթա՛ ոտքերուս.
Արիւն սըրսկելով թափառեցան յար
Աւերակներու եղիճներուն մէջ:
Ջանոնք չըլըուաց ձեռք մը սիրական
Ո՛չ մէկ լականի մէջ ասպընջական
Ոտնամատերէս կ'հուսին մոխիրներ.
Ես շատ եմ քալեր:

Ո՛վ խաչում Յիսուս,
Դուն որ նիզակում սիրտ մը ունեցար՝
Գըթա՛ սըրտիս յոյգ.
Օր մ'որ անոր մէջ բաբախեց աշխարհ՝
Յոյսին տեղ այսօր Ոչինչը կ'ապրի:
Սիրտըս սափոր մ'է՛, աճիւնս՝ անոր մէջ,
Ջոր պիտի հովէրն առնեն մահէս վերջ:
Տէ՛ս, տէ՛ս, սըրտիս վրայ դաշոյն մ'է՛ խըրուեր.
Ես շատ եմ սիրեր:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ



ՈՒՍԱԴՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԻՆՉՊԻՍԻՆ Է ԱՍՏՈՒԱԾ

Ճիշդ է, որ ՀԿ-ին մեջ մեզի յատկորեն չ'ըսուիր թե «Աստուած հոգի է» (հմմտ Յհ 4.24), և նոյնիսկ հակառակ տպաւորութիւնը կրնանք ունենալ, եթէ փորձենք տառացիօրէն հասկնալ Աստուծոյ վերաբերող մարդակերպ արտայայտութիւնները: Բայց շատ յատակ է, որ մարդակերպ այդ ներկայացումը՝ աչքերով, ականջներով, թևերով ու ձեռքերով, ոտքերով, զգացումներով, յոյզերով, ևլն (օրինակ, Ծն 3.8, կամ Ա.Թգ 8.21), պարզապէս նպատակ ունի Աստուծոյ հասկացողութիւնը դիւրացնել պարզ մարդուն համար, որ այլապէս երբեք ալ ի վիճակի պիտի չըլլար գոտ հոգեղէն էակ մը պատկերացնելու: Յիշենք, որ նոյնիսկ հրեշտակները, որոնք ստեղծուած հոգեղէն էակներ են, կարելի պիտի չըլլար տեսնել ու ճանչնալ, եթէ անոնք մարդոց ճանաչելի կերպարանքով (ստիպարակ մարդկային) չներկայանային: Եւ նոյնը ճշմարիտ է նաև այսօրուան մարդուն, հակառակ իր այնքան նուրբ և վերացականին ասակ մտածողութեան:

Առաջին հերթին, Աստուած ինքզինք կը յայտնէ իբրև մէկ և միակ Աստուածը, որմէ զատ չկայ ուրիշ Աստուած. և որուն նմանը բացարձակապէս չկայ (Բ.Օր 4.35, 32.39: Ես 44.6, 45.5 և 22): Եւ այս միակութիւնը պիտի դառնար նաև Աստուծոյ ժողովուրդին հաւատամքը. «Լսէ՛, ով Իսրայէլ, քու Տէր Աստուածդ միակ Տէրն է» (Բ.Օր 6.4): Յաճախ այս յայտնութիւնը կու տայ ժխտականօրէն, ջատագովական լեզուով, հերքելով կոտորելու կամ չաստուածները, որոնք ոչինչ ու ստութիւն են (Սղ 115.4-7: Ես 42.8, 44.8-20: Եր 10.3-5 և 8-9), ևլն:

Աստուած ինքզինք կը յայտնէ իբրև գերագոյն Բանականութիւն, որ համայն տիեզերքը կը ստեղծէ իր խօսքով, և զայն կը կարգաւորէ և կը լեցնէ: Եւ Ծնունդներու հեղինակը վստահաբար առաջին հերթին այս բանականութիւնը նկատի ունի Աստուծոյ պատկեր կամ նմանութիւն, երբ մարդուն ստեղծման առիթով կ'ըսէ. «Աստուած ըսաւ.-«Մեր պատկերով և մեր նմանութեամբ մարդ ստեղծենք» (1.26):

Աստուած ինքզինք կը յայտնէ նաև իբրև կատարելութիւն: Եթէ այդ կատարելութիւնը Յիսուսի բացայայտ բառերով չի հաստատուիր (Մտ 5.48), բայց ի յայտ կու գայ իրեն տրուած ստորագելիներէն և իր գործերէն: Այսպէս, օրինակ.-

ա.- Ան ինքզինք կը յայտնէ իբրև «Յաւիտենական Աստուածը» (Ծն 21.33: Բ.Օր 33.27: Ես 40.28), իբրև «յաւիտենական թագաւորը» (Եր 10.10), իբրև «Հինաւորցը» (Դն 7.9): Կը յայտարարէ, թէ ինք յաւիտեան կենդանի է (Բ.Օր 32.40), յաւիտեան կայ (Սղ 9.7: Ողբ 5.19), թէ ինք սկիզբէն է, իրմէ առաջ մէկը չկայ (Ես 43.10), յաւիտեաններէն առաջ է (Սղ 90.2), թէ իր տարիները վերջ չունին (Սղ 102.27): Միակ «կենդանին» է ան, միակ «կենդանի Աստուածը» (Թւ 14.21 և 28: Բ.Օր 5.26: Յես 3.10: Ա.Թգ 17.26 և 36: Դ.Թգ 19.4: Սղ 42.2, 84.2: Եր 10.10: Դն 6.26), և ամէն կեանքի ու կենդանութեան աղբիւրը:

բ.- Ան ինքզինք կը յայտնէ իբրև «Ամենակարող Աստուածը» (Ծն 17.1: Ելք 6.3): Եւ ստեղծագործութենէն սկսեալ իր բոլոր գործերը վկայութիւն են այդ ամենակարողութեան:

գ.- Անիկա արարածներուն համար անիմանալի և անքննելի է, ինչպէս անիմանալի և անքննելի են անոր զօրութիւնը, դատաստանը և արդարութիւնը (Յոր 11.7, 37.23: Սղ 145.3), անոր մտածողութիւնը կամ իմաստութիւնը (Ես 40.28):

դ.- Անիկա անփոփոխ է (Սղ 102.26-27: Ես 43.13), որովհետև կատարեալ է, պէտք չունի ունէ փոփոխութեան, որ միայն արարածներուն յատուկ է: Ամէն ինչ փոփոխական և անցուկ է, բայց Տէրը ինք անփոփոխելի է և անանց: Այս հաստատումը նաև կը նշանակէ՝ թէ անփոփոխ են Աստուծոյ ծրագիրը և վարմունքը մարդուն հանդէպ, ինչպէս անփոփոխ են իր տուած խոստումները (Սղ 33.11: Ես 14.24): «Աստուած մարդ չէ՝ որ սուտ խօսի, մարդու որդի չէ՝ որ միտքը փոխէ (= զոջայ). իր ըսածը պիտի չընէ՛. իր խոստումը պիտի չկատարէ՛» (Թւ 23.19: Ա.Թգ 15.29): Անիկա մեծագոյն ապահովութիւնն է որ Տէրը կու տայ իրեն վստահողներուն (Սղ 3.6): Իսկ երբ Աստուածաշունչը տեղ-տեղ Աստուծոյ կողմէ կամ Աստուծոյ համար «զոջալու» կամ «մտադրութիւնը փոխելու» մասին կը խօսի, ասիկա պարզապէս որդեգրումն է մարդկային լեզուին, արտայայտելու համար՝ աշխարհին, մեղքին ու չարին մերժումը, և ընդգծելու համար Աստուծոյ սպասումը՝ որ մարդը ինք փոխուի և դառնայ դէպի բարին, լաւը, ուղիղը: Իսկ մինչդեռ մարդը այսպիսի փոփոխութիւն մը կ'իրագործէ ժամանակի ընթացքին, Աստուած ինք վեր է ժամանակէն, և իր յաւիտենականութեան յարաբերաբար ժամանակը ակնթարթ մըն է լոկ:

ե.- Անիկա ամենագէտ է (Յոր 12.13): Աստուծոյ գիտութիւնը բացարձակ է, անսահմանափակ, անսահմանելի (Սղ 147.4: Ես 40.28): Աստուած ամէն ինչ գիտէ - ո՛չ միայն անցեալն ու ներկան, այլ նաև ապագան-, և ամէն ինչ գիտէ սկիզբէն (Ես 42.8-9: Հմմտ հակադրութիւնը չաստուածներուն հետ՝ Ես 41.21-23, 44.6-7): Մարդու բոլոր ճամբաները ծանօթ են Տիրոջ, որ «կը քննէ խորհուրդները» (Սղ 7.9, 34.11, 139.1-6: Առ 5.21: Եզ 11.5): Այդ գիտութիւնը մարդակերպ բացատրութեամբ մը «տեսնել» կը կոչէ Աստուածաշունչը, հաստատելու համար՝ թէ Աստուած երկինքէն կը դիտէ ու կը տեսնէ և գիտէ ամէն ինչ, թէ՛ բարին և թէ՛ չարը (Ծն 6.5: Ելք 3.7: Սղ 33.13: Առ 15.3): Անիկա ինչքան որ ահարկու է չարագործին համար, նոյնքան մխիթարական է Աստուծոյ ապաինած մարդուն համար (Բ.Մն 16.9: Եր 17.10):

զ.- Անիկա ամենուրեք է: Իր ներկայութիւնը երկինք ու երկիր կը լեցնէ, և չկայ տեղ մը ուր ինք չըլլայ (Եր 23.23-24: Հմմտ Գ.Թգ 8.27: Սղ 139.1-10: Ես 66.1), թէպէտև ինք անսահմանօրէն գերիվեր է երկինքէն ու երկրէն, ինչպէս Եսայի մարգարէն կը բնութագրէ. «Այսպէս կ'ըսէ Բարձրը և Բարձրեալը, որ յաւիտենականութեան մէջ կը բնակի, և անոր անունը Սուրբ է» (Ես 57.15): Այդ ներկայութիւնը պատմական փորձառութեամբ ապրեցաւ Իսրայէլը, միշտ իրեն հետ, և իրեն մօտիկ զգալով Տէրը (Բ.Օր 2.7, 4.7): Նոյն այդ ներկայութիւնը և անոր պարզաւած օգնութիւնն ու օրհնութիւնը կ'ապրի իւրաքանչիւր անհատ որ զԱստուած կը փնտռէ (Ծն 16.13: Սղ 46.1, 145.18):

Վերոյիշեալները, Աստուծոյ ստորագելիներուն չնչին մէկ տոկոսն են, և բոլորն ալ ցոյց կու տան Աստուծոյ անսահման կատարելութիւնը:

ԶԱՐԵՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ

ԳԼՈՒԽ 17

- Յիսուսի Պայծառակերպությունը (Մր 17. 1-13)
- Լուսնուր երեխայի բժշկությունը (Մր 17. 14-20)
- Կրկին կանխասացություն (Մր 17. 21-22)
- Տաճարին տրուելիք տուրքը (Մր 17. 23-26)

ՏԱՃԱՐԻՆ ՏՐՈՒԵԼԻՔ ՏՈՒՐԲԸ (Մտ 17.23-26)

Տաճար յաճախելը թանկ էր: Այնտեղ տեղի կ'ունենային առաօտեան և երեկոյեան գոհաբերություններ՝ մէկ տարեկան գառ: Բացի կենդանական գոհերէ կային այլ ընծաներ ևս՝ գինի, ալիւր, ձէթ, խունկ: Միւս կողմէ, քահանաներու զգեստներն ու քահանայապետի զգեստը՝ որ արքայի հանդերձի արժէք ունէր: Այս բոլորը գումար էր:

Ասկէ գատ, Ելից գիրքի համաձայն պէտք է վճարէին սրբարանի երկդրամեանի կէսը (Ելք 30:13): Նէէմիայի օրերուն, երբ ժողովուրդը աղքատ էր, անիկա 1/3 սիկղ էր, 1/2-ի փոխարէն, որ մէկ աշխատատրի երկու օրուան վարձն էր: Այս տուրքը պարտադիր էր, չվճարելու պարագային, տաճարի իշխանությունները իրաւունք ունէին բռնագանձելու չվճարողի ունեցուածքը: Մարտ ամսուան առաջին օրը այս մասին կը յայտարարուէր ամէն տեղ. ամսուն 15-էն սկսեալ անիկա կը հաւաքուէր մինչև ամսուն 25, այլապէս պէտք է ուղակիօրէն վճարուէր Երուսաղէմի Տաճարին:

Այս հատուածին մէջ կը տեսնենք Յիսուսը տուրք վճարելու հարցով, երբ հարկահաւաքները կը մօտենան Պետրոսին և կը հարցնեն. «Ձեր վարդապետը երկդրամեանը պիտի չտայնա»: Պետրոս՝ այո, կը պատասխանէ: Սա առիթ էր կրկին ու կրկին Յիսուսը ամբաստանելու: Բնականօրէն Պետրոս կը պատմէ Յիսուսին, որ կ'ըսէ. «Ի՞նչ կը կարծես, Միմն, ազգերու թագաւորները հարկերը կամ տուրքը որմէ կ'առնեն, իրենց որդիներէն, թէ օտարներէն»: Պետրոս կ'ըսէ՝ օտարներէն: Այդպէս էր, թագաւորի ազգակիցները երբեք հարկ չէին վճարեր, եթէ իրենց ենթակայ ազգեր կային, որոնք իրենք կը վճարէին: Հետևաբար, Յիսուս կ'ուզէր ըսել. «Աստուած Իսրայէլի թագաւորն է, և մենք ենք իսկական Իսրայէլը, արդ, մենք իբրև Աստուծոյ թագաւորութեան քաղաքացիներ զերծ ենք տուրք վճարելէ, բայց օտարները պէտք է վճարեն»: Տաճարը Աստուծոյ տունն էր, և Յիսուս՝ Աստուծոյ Որդին, յիշենք ինչ ըսաւ, երբ իր ծնողները տագնապած զինք կը փնտռէին, «Ինչո՞ւ զիս կը փնտռէք, չէք գիտեր, թէ ես Հօրս տան մէջ պէտք է ըլլամ» (Գկ 2.49):

Յիսուս ցոյց կու տայ, որ տուրքը կը վճարէ ոչ թէ օրէնքի հարկադրանքի տակ ըլլալով, այլ ցոյց կու տայ անելի մեծ պատասխանատուութիւն, օրինակ ծառայելով շատերուն, որ պէտք չէ խուսափիլ պարտաւորություններէ: Քրիստոնէայ անհատի մէջ կողք-կողքի են քրիստոնէան և քաղաքացին. ան որ կը հրաժարի իր քաղաքացիական պարտաւորություններէն, ոչ թէ կը թերանայ իր քաղաքացիական պարտաւորություններուն մէջ, այլ քրիստոնէութեան մէջ նաև:

Այժմ անդրադառնանք այս դէպքի մէկ այլ երևոյթին, երբ Յիսուս Պետրոսին ըսաւ. «Գնա՛ ծով ու կարթը նետէ, և առաջին ձուկը, որ դուրս ելլէ, առ ու բաց անոր բերանը և մէկ արծաթ պիտի գտնես. Կ'առնես և իմ ու քու տեղդ անոնց կու տաս»: Արդե՞՞ք տառացիօրէն պէտք է ընկալել այս խօսքը, մանաւանդ երբ անտարանիչը չի պատմեր, որ Պետրոսը այդպէս ըրաւ. պատմությունը կ'աւարտի Յիսուսի այս խօսքով: Արևելքի ժողովուրդները կը սիրէին նման բաներ ժպիտով և հետաքրքիր ձևով ըսել:

Հետևաբար,

1. Աստուած հրաշքներ չի դրկեր, ընելու այնպիսի բաներ, զորս մենք կրնանք ընել: Աշակերտները թէև աղքատ էին, բայց ոչ այնքան, որ հրաշքի սպասէին երկու սիկղ ունենալու համար, մարդկային ուժերէն վեր չէր այս գումարը հայթայթել:
2. Շատ կարևոր է Յիսուսի որոշումը. ան երբեք իր անձնական կարիքներուն համար չ'օգտագործեր հրաշագործութեան զօրութիւնը, կրնար չէ՞, քարերը հաց դարձնել. Անապատին մէջ Յիսուս միանգամընդմիշտ որոշեց, որ իր զօրութիւնը պիտի չօգտագործէ անձնասիրաբար:
3. Եթէ այս հրաշքը տառացիօրէն ընդունինք, կը նշանակէ, որ կեանքը քառասային կը դառնար, եթէ մարդ իր պարտաւորությունները կատարելու համար, իր կարիքները ձկան բերնէն գտնէր, սա կեանքի անաշխատունակ ձև է, որ մարդս կրնայ է ծուլութեան մղել:

Յիսուսի ըսածին մէջ մարդու պարտաւորութեան կոչ կայ, թէ, այո, պէտք է վճարել մեր օրինաւոր պարտքերը. այս խօսքերուն մէջ մարդը աշխատանքի մղելու ձգտումը կը տեսնենք, և գիտենք ինչպէս ընել, ինչպէս Պետրոսը, որ ձկնորս էր, և կրնար աշխատելով հայթայթել ինչ բանի որ կարիքը ունէր: Նոյնն է պարագան արհեստատրի, արուեստագետի, ուսուցչի, եկեղեցականի և բոլորիս:

Յիսուսի ըսածը տառացի չէ, այլ կը փափաքի ըսել, որ մարդուն օրուան աշխատանքը կարող է հոգալ անոր կարիքները:

